

**ԴԱՐՁՎԱԾՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ  
ԱՐԺԵՔԸ ՀԱՄՈՍԱԶՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

ԵՐԶՆԿՅԱՆ Ռ. Ա.

Դարձվածները լեզվի արտահայտչականության ու պատկերավորման լավագույն միջոցներից են և հանդես են գալիս թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում: Դրանք խոսքը ոճավորելու հրաշալի միջոցներ են՝ «խոսքի աղն ու համեմունքը»<sup>1</sup>, և դրսևորվում են ոճերի բոլոր տեսակներում: Առանձնապես մեծ է դարձվածի դերը գեղարվեստական գրականության մեջ: Դարձվածների շնորհիվ շատ հաճախ խոսքն ազատվում է չորությունից ու երկարաբանությունից, դրանք իրենց իմաստային նրբերանգներով մտքին տալիս են դիպուկություն ու կենդանություն՝ այլաբանորեն ներկայացնելով ասելիքը: Փոխաբերությունը (վերաիմաստավորումը) դարձվածի էական հատկանիշն է, այն ներհատուկ է ցանկացած դարձվածի: Խոսքի մեջ դարձվածները հարաբերակցվում են ինչպես բառերին (անվանողական), այնպես էլ նախադասություններին (հաղորդակցական): Դարձվածները իրենց ուրույն տեղն ունեն խոսքը վարպետորեն ոճավորող բանաստեղծի՝ Համո Սահյանի քնարերգության մեջ: Խոսքի մեծ վարպետը հմտորեն է գործածում թե՛ անվանողական և թե՛ հաղորդակցական դարձվածները:

Անվանողական դարձվածներ: Սրանք ստորոգումից գուրկ դարձվածներն են, որոնք անվանողական արժեք ունեն և համարժեք են բառերին: Այս դեպքում դրանք վերաիմաստավորված կերպով նշում են անձը, առարկան, երևույթը, սրանց հատկանիշները: Համո Սահյանը կիրառում է այնպիսի դարձվածներ, որոնք կարող են այնքան պատկերավոր լինել, դրանցում փոխաբերական իմաստը այնքան ցայտուն է երևում, որ գործողությունը նույնիսկ տեսանելի է դառնում, ինչպես՝

մազե կամուրջ<sup>2</sup> - վտանգավոր փորձություններով ու դժվար հաղթահարելի խոչընդոտներով լի ճանապարհ, խոչընդոտ.

Մազե կամուրջներ անցանք աշխարհում,

Հողմերի միջով՝ մենք հազար տարվա

Ճանապարհ անցանք (ՀԵՄ, 171):

Հետո հազար մազե կամուրջ,

Սրտում հազար անուրջ ու սեր... (ՔՊ, 633):

Խեղճ ու կրակ - անօգնական.

Էջմիածնա վանքի բակում

Խեղճ ու կրակ որբերի ծով (ՔՊ, 633):

Դու և կրակ, դու և ծաղիկ,

<sup>1</sup> Բաղիկյան Խ., *Դարձվածային ոճաբանություն*, Ե., 2000, էջ 12:

<sup>2</sup> *Դարձվածների իմաստները տե՛ս Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, Ե., 1975, Բաղիկյան Խ., *Ուսումնական դարձվածաբանական բառարան*, Ե., 2002:

Խեղճ ու կրակ և անառիկ,  
 Դու բնություն անքննելի... (ԲԲ,201):

Ճակատը բաց - պարզերես.  
 Աշխարհի առաջ իմ բաց ճակատով  
 Ամենից առաջ մարդ եմ աշխարհում (ՔՊ,203):

Կապը կտրած - սանձարձակ.  
 Գե՞տ է, չգիտես, թե՞ կապը կտրած  
 Պտուտակահողմն է լեռներից պոկվել ... (ԲԲ,48):

Սահյանի բանաստեղծություններում հանդիպում են նաև անվանողական հականիշ դարձվածներ. օրինակ՝

աչքի փուշ - սաստիկ ատելի, աչքի լույս - ամենասիրելի.  
 Նա մեծ էր, այո,  
 Բոլոր մեծերին մերձ ու մերձավոր,  
 Դրա համար չեղավ մեծավոր,  
 Աչքի փուշն եղավ մեծավորների:  
 Եվ որովհետև  
 Մեծավորների աչքի փուշն եղավ,  
 Աչքի լույսն եղավ մերձավորների (ՔՊ,497):

Կամ՝  
 ... Մեկի աչքի լույսը,  
 Մեկի աչքում, սակայն,  
 Անխիղճ աչքահանիք  
 Եվ աչքի փուշ էի (ԴԾ,125):

Ինչպես բերված օրինակներում, այնպես էլ բոլոր դարձվածներում, խիստ ակնառու է մի կարևոր հանգամանք՝ քիչ բառերով խորիմաստ մտքեր արտահայտել: Անշուշտ, Համո Սահյանի կիրառած դարձվածները նպաստում են ժողովրդախոսակցական լեզվի ու ազգային լեզվամտածողության կոլորիտ ստեղծելուն:

Հաղորդակցական դարձվածներ: «Նախադասություն-դարձվածները այլաբերական-փոխաբերական իմաստ արտահայտող այնպիսի կառույցներ են, որոնք խոնարհված բայով բաղադրիչ են ունենում և հանդես գալիս նրա հետ իբրև ամբողջական, ամփոփ միավոր»<sup>3</sup>: Նախադասություններին հարաբերակից դարձվածները հաղորդակցական արժեք ունեն: Այդպիսի դարձվածներում պարտադիր ստորոգում է լինում, ինչպես՝

քիթը քամի ընկնել - որևէ բան անելու ցանկություն առաջանալ.  
 Տերևի քիթը քամի է ընկել,  
 Քամին չի հասնում նրա ետևից (ՔՊ,601):

Աչքի տակով նայել - գաղտնի, աննկատ կերպով նայել, սիրտը փորն ընկնել - սաստիկ վախենալ.  
 Նայեց կաղնին աչքի տակով,  
 ... Սիրտը պոկվեց ու փորն ընկավ (ԵԺ,362):

Լեզուն կուլ տալ - պապանձվել.  
 Ամպը լեզուն կուլ է տվել,

<sup>3</sup> Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1991, էջ 310:

Հնար չունի որոտալու (ՔՊ,286):

Իրար միս ուտել – տանջել, չարչարել.

...Եվ ուսերի վրա

Իրար միս են ուտում

Քարաքոս ու մացառ ... (ԿԿ,383):

Մատ թափ տալ - սպառնալ.

Ո՞ր կողմերից եք խաղալով գալիս,

Ի՞նչ եք մտածում, ամպե՛ր իմ հիմար,

Քամին ձեզ վրա մատ է թափ տալիս,

Է՛հ, ուշացել եք, կծե՞ծի հիմա (ԲՄ,314):

Հաղորդակցական դարձվածներում Սահյանը գործածում է բայերի գրեթե բոլոր եղանակներով արտահայտված ստորոգյալներ, որոնցով էլ խորիմաստ խոսք է կերտում: Այսպես, օրինակ, լեզուն իրեն պահել (խոսքերը չափավորել) դարձվածի բայը հրամայական եղանակի կիրառությամբ է (քեզ պահի՛ր լեզուդ), քարով տալ (ստորացնել) դարձվածի բայը արգելական հրամայականի կազմությամբ է (քարով մի՛ տուր), իսկ սիրտը քարանալ (անզգա դառնալ) դարձվածի բայն էլ ենթադրական եղանակի կիրառությամբ է (սիրտս կքարանա).

Ախ, մի քիչ քեզ պահի՛ր լեզուդ,

...Քարով մի՛ տուր ցաված սրտիս,-

Սիրտս նորից կքարանա ... (ՀԵՄ,284):

Այսպիսով՝ հաղորդակցական դարձվածները, ըստ իրենց գործառնության ոլորտների, դատողություններ են անձերի, առարկաների, երևույթների ու նրանց հատկանիշների վերաբերյալ:

Դարձվածների արտահայտչական հնարավորությունները: Քանի որ դարձվածը խոսքի ոճավորման կարևորագույն միջոց է, բնականաբար, դարձվածային համակարգում գործում են ոճական գրեթե բոլոր միջոցներն ու դարձույթները: Դրանցից մի քանիսը առկա են Համո Սահյանի պոեզիայում: «Համեմատությունը դարձվածի արտահայտչական միջոցներից մեկն է, որի հիմքում ընկած է մի առարկայի ու նրա հատկանիշի կամ գործողության ու նրա հատկանիշի հարաբերությունը մեկ ուրիշ առարկայի հատկանիշի, գործողության հիմնական կամ ընդհանուր հատկանիշների հետ», - գրում է Խ. Բաղիկյանը<sup>4</sup>: «Երգ իմ» բանաստեղծության մեջ Սահյանը գեղեցիկ, քնարական համեմատություն է անում.

...Թող ձմեռդ ուշանա,

Եվ աշունդ երկարի

Մթնաձորի դասական

Կանաչ-կարմիր աշնան պես (ՔՊ,648):

Բանաստեղծը վերաիմաստավորված խոսքը շեշտելու, ավելի ընդգծելու նպատակով դիմում է նաև դարձվածների ոճական մեկ այլ միջոցի՝ նրա բաղադրիչների կրկնությանը: Այսպես, օրինակ, խելք

<sup>4</sup> Բաղիկյան Խ., Դարձվածային ոճարանություն, էջ 22:

խելքի տալ դարձվածով նշվում է համատեղ խորհրդակցելով մի լավ գործ անելու փաստը.

Ես եմ, գիշերը, քարափն ու քամին ...

Խելք խելքի տվել, նստել այս ժամին,

Ու միտք ենք անում... (Ի,278):

Մի ուրիշ տեղ նույն դարձվածով բանաստեղծը այլ նրբերանգ է հաղորդում խոսքին՝ անցողիկ ժամանակի, կորցրածի և շահածի մասին միասին մտածելու կարևորությունը ընդգծելով.

Այս, իմ ժամանակ ժամանակավոր,

Ասա, մեզ քանի՞ ժամ է հարկավոր,

Որ խելք խելքի տանք, տեսնենք աշխարհում

Ի՞նչ ենք կորցրել և ի՞նչ ենք շահում ... (ՔՊ,507):

Փոխաբերացվող կառույցների իմաստները սաստկացնելու նպատակով Սահյանը կիրառում է մի շատ հետաքրքիր արտահայտչամիջոց՝ աստիճանավորումը (գրադացիա), երբ «որևէ երևույթի, դեպքի, գործողության, բնավորության կամ հոգեկան վիճակի տրվող բնութագրումները աստիճանաբար ուժեղացվում կամ թուլացվում են»<sup>5</sup>:

Այս դեպքում սովորաբար իրար կողքի կիրառվում են երկու, նույնիսկ երեք դարձվածներ, որոնցից հաջորդը աստիճանաբար ուժեղացնում, սաստկացնում է նախորդի իմաստը, և այդ կրկնվող դարձվածի միջոցով գնալով բարձրանում են խոսքի ուժգնությունն ու հուզականությունը և, որ ամենակարևորն է, ավելի է խորացվում ու ընդգծվում վերաիմաստավորված ասույթի խորությունը: Այսպես, «Որ ես գրեմ» բանաստեղծության մեջ ջուրը թևեր է առնում՝ թևավորվում, ոգևորվում ու, դա դեռ քիչ է՝ խելքը գլխից թռչում է՝ ցնորվում է ու, նույնիսկ, ուշքը գնում՝ ուշաթափվում է (ՔՊ,527):

«Ինչո՞ւ է այդպես» բանաստեղծության մեջ հեղինակը ջրից դուրս գալու գործողության իմաստը սաստկացնում է կրակն ընկնել դարձվածով.

Որտեղի՞ց եկանք և ո՞ւր ենք գնում,

Երեկ չկայինք, վաղը չենք լինի,

Ջրից դուրս գալիս, կրակն ենք ընկնում՝

Խոկալով խորհուրդն այս երկրայինի (ԴԾ,111):

Փոխաբերական դարձվածի մի տեսակ էլ համըմբռնման (սինեկդոխա) դարձվածներն են, որոնք «այլաբանորեն դրսևորվում են մասի և ամբողջի, ընդհանուրի և մասնավորի, եզակիի և հոգնակիի՝ մեկը մյուսի փոխարեն գործածվելու եղանակով»<sup>6</sup>: Դրանք հիմնականում կազմվում են մարմնի մասերի անվանումներից, որոնց արտահայտած փոխաբերական իմաստները խոսքը դարձնում են առավել պատկերավոր ու տպավորիչ:

Համո Սահյանի բանաստեղծություններում հանդիպում են նմանատիպ կազմությամբ շատ դարձվածներ, օրինակ, աչքը չկշտանալ - չհագենալ.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 51:

Որքան գովում են քեզ, աչքդ չի կշտանում,  
Դու ազահ ես, իմ երգ, և ինքնապաշտ (ՔՊ,84):

Միրտը բացել - անկեղծանալ.

Բաց է հորիզոնն, ու երկինքը՝ ջինջ,  
Եվ սիրտն է բացել առավոտն իմ դեմ ... (ՔՊ,261):

Հեղինակը հարազատ աշխարհը պատկերելու համար, ուր անգամ ժայռերն իրար անխոս հասկանում են, կիրառում է աչք-ունքով խոսել (աչքի, ունքի շարժումներով մի բան հասկացնել) դարձվածը.

Ես եկել եմ այն աշխարհից,  
Ուր ժայռերը ժայռերի հետ  
Աչք-ունքով են խոսում (ՔՊ,173):

Բանաստեղծի անհանգստությունը ազգի համար արտահայտվում է վիզը ծռել (խեղճացնել) դարձվածով.

Եվ նորից թափառ մի ցեղ  
... Մեր վիզը ծռել է ուզում... (60 և մեկ,48):

Իսկ դժվարություններով լի իր վերելքը հեղինակը պատկերում է ոտքը ժայռ ու քարին տալով, ճակատը բաց (համարձակ, պարզերես) ու սիրտը բաց (անկեղծ) դարձվածներով.

Ոտքս ժայռ ու քարին տալով,  
Ճակատս բաց ու սիրտս բաց,  
Գնում էի վերելքն ի վեր... (ՔՊ,254):

Տաղանդավոր բանաստեղծը ոչ միայն նոր երանգներ է հաղորդում մեր լեզվում եղած դարձվածներին, այլև ստեղծում է նորակազմ դարձվածային կապակցություններ, որոնց մի մասը, գրողների, ինչպես նաև ժողովրդի կողմից ընդունվելով, տարածվում է և դադարում պոտենցիալ լինելուց: Նորաբանությունների որոշ մասն էլ չտարածվելով, մնում է մեկ անգամ գործածված, այսինքն՝ դառնում է դիպվածային: Ահա հեղինակը «Ա՛խ չբարակի» բանաստեղծության մեջ գույնը գցել, ձայնը տվել դարձվածների կողքին ստեղծել է իր խոսքը ասել դարձվածը՝ կերտելով փոխաբերական մի հրաշալի պատկեր.

Կեչին չոքել էր արահետին  
Եվ կարծես մի քիչ գույնը գցել էր ...  
...Անձրևն իր խոսքը ասել պրծել էր,  
Ձայնը տվել էր պղտոր գետին (ՄԱ,19):

Կամ՝ խելք է եկել խելքի վրա (խելոքացել է, իմաստնացել) նորակերտ դարձվածով նոր երանգ է հաղորդել պատկերին.

Մասրենի, միտս եկար ...  
Ու երբ որ միտս եկար,  
Ո՞վ գիտե, թե որտեղից  
Խելք եկավ խելքիս վրա (ՔՊ,449):

Մթնել բառի փոխաբեն Սահյանը գրում է՝ օրը գնում է ձեռից, ծառըն իրենից մեծ ստվեր է ծնում, սարեր են ծլում, շարժվում են կարծես սարերը և բոլորովին նոր զգացողություններ է ներշնչում ընթերցողին.

Սարերի ծոցից սարեր են ծլում,  
Շարժվում են կարծես սարերը տեղից,  
Ծառն իրենից մեծ ստվեր է ծնում,  
Եվ օրը արդեն գնում է ձեռից (ՔՊ, 600):

Նորաբանություն է նաև մեր միջոցով սև կատու է անցել (տարաձայնություն, դժգոհություն ծագել, իրարից նեղանալ) համագործածական դարձվածի համաբանությամբ մեր արանքով մթին հեղեղներ են անցել դարձվածը, որն էլ բնորոշում է սառած հարաբերությունները (հանդիպակաց քարափներ դառնալ)։

Մեր արանքով մթին                      Երկու հանդիպակաց  
Հեղեղներ են անցել                      Քարափներ ենք դարձել  
Ու գնացել:                      Ու մնացել (ԲԲ, 188):

«Թող մոտ չգան» բանաստեղծության մեջ հայրենիքի հանդեպ ոտնձգություն կատարողներին զգուշացնելով քար կտրել (ընդարմանալ, անշարժանալ), քարով տալ (վարկաբեկել) դարձվածներով՝ բանաստեղծը կերտում է Հայաստանը բնութագրող՝ տոհմի տաճար, խղճի խորան, մեռոնի գուռ նոր դարձվածները, որոնք լայնորեն տարածվելու և գործածվելու հնարավորություններ ունեն։

Քար կկտրեք, թե քարով տաք  
Իմ քարակուռ Հայաստանին,  
Տոհմի տաճար, խղճի խորան,  
Մեռոնի գուռ Հայաստանին (ԳԹ, 26.X.1990):

«Ինքս ինձ պես» բանաստեղծության մեջ քարին քացի տալով (մեծ դժվարությամբ իր ապրուստը հոգալ), հոգի տալով (նվիրվածությամբ մի բան անել), դարձի գալով (սխալ ճանապարհից հետ կանգնել) համագործածական դարձվածների համաբանությամբ բանաստեղծը ստեղծում է աչքս հազար լացի տալով (հուզվելով) պոտենցիալ դարձվածը (ՔՊ, 458):

Ճիշտ է, այս դարձվածները Սահյանը մեկ անգամ է կիրառել որպես հեղինակային նորաբանություններ, բայց դրանք այնքան հաջողված կառույցներ են, որ կարող են դառնալ համագործածական։

Ի տարբերություն պոտենցիալների, դիպվածային դարձվածները մնում են խոսքային մակարդակում։ Դրանք հիմնականում բանաստեղծի երևակայությամբ ու մտքի թռիչքով են ստեղծվում, որոնցով հարստանում են բանաստեղծական պատկերները, առարկայացվում են պատկերված հույզերն ու մտքերը, ինչպես՝

Ա՛ խ, ձիերս, ձիերս ...                      Արժե, որ ապրես,  
Գագաթների հողմերից                      Երբ այս խիղճը ծախած,  
Թներ խլած ձիերս,                      Հունից փախած կյանքում  
Սուրբ ավերից Աստծո                      Տարիքն առած մարդու                      Երկինք խմած  
ու վայրի,                      Իմաստության կնճիռ կա...  
Հաճախ հասկ, առվույտի                      Երբ... Բույն կա ինչ-որ հավքի,  
Ծաղիկ կերած ձիերս...                      Բնում՝ թռիչքների  
(ԳԹ, 26.X.1990):                      Կանաչ երազանք կա  
(ՍՀ, 26.XII.1987):

Ինքը բանաստեղծը խոստովանում է, որ «չի վախենում նույնիսկ ամենահաստակ ու ամենագործածական դարձվածներից, դրանք նորություններ են, և այդ իմաստները առաջինը ինքն է նկատել»<sup>7</sup>:

Այսպիսով, Համո Սահյանը հաճախ է օգտվել խոսքը ոճավորելու անփոխարինելի միջոցներից՝ դարձվածներից՝ բանաստեղծությունը ավելի պատկերավոր ու արտահայտիչ դարձնելու նպատակով: Նա կիրառել է դարձվածների գործածության գրեթե բոլոր ձևերը, ոճաբանական գրեթե բոլոր միջոցներն ու դարձույթները: Բանաստեղծի պոեզիայում մեծ թիվ են կազմում ժողովրդական ծագում ունեցող դարձվածները, հեղինակային նորաբանությունները:

#### Համառոտագրություններ

ԲԱ - Սահյան Հ., Բանաստեղծություններ, 2 հատորով, Ա հատոր, Ե., 1967:

ԲԲ - Սահյան Հ., Բանաստեղծություններ, 2 հատորով, Բ հատոր, Ե., 1969:

ԳԹ - Գրական թերթ:

ԴԾ - Սահյան Հ., Դադաի ծաղիկ, Ե., 1986:

ԵԺ - Սահյան Հ., Երկերի ժողովածու, 2 հատորով, հ. 2, Ե., 1984:

Ի - Սահյան Հ., Իրիկնահաց, Ե., 1977:

ԿԿ - Սահյան Հ., Կանչե կռունկ, Ե., 1973:

ՀԵՄ - Սահյան Հ., Հայաստանը երգերի մեջ, Ե., 1962:

ՄԱ - Սահյան Հ., Մայրամուտից առաջ, Ե., 1964:

ՍՀ - Սովետական Հայաստան:

ՔՊ - Սահյան Հ., Քարե պատարագ, Հատընտիր, Ե., 2005:

60 և մեկ - Սահյան Հ., 60 և մեկ հայրեն, Ե., 2003:

### СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ФРАЗЕОЛОГИЗМОВ В ПОЭЗИИ АМО САГИЯНА

ЕРЗНКЯН Р. А.

#### Резюме

Великий мастер слова Амо Сагиян в своем поэтическом творчестве часто использовал фразеологические обороты, придающие слову метафоричность.

Большая часть используемых им фразеологизмов имеет фольклорную основу, помимо этого есть фразеологизмы-неологизмы, созданные самим поэтом.

<sup>7</sup> Սահյան Հ., Տողբ, բանը, տաղը (ԳԹ, 28.III.1969):